

Հաստատում եմ՝ Վանաձորի Հ. Թումանյանի



ունկնդիր, տեխն. գ. դ., պրոֆ.

Ռ. Ռ. Սահակյան

«10» հունիս 2021 թ.

## ԿԱՐԾԻՔ

### Առաջատար կազմակերպության

Աշոտ Վոլոյյանի Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական - 21-րդ դ. 10-ական թթ.)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար՝ Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

Կարծիքն ընդունվել է ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի նիստում (10.06.2021 թ., արձ. թիվ 18)՝ բաց քվեարկությամբ: Նիստին մասնակցում էին Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ք.ք.թ., դոցենտ Հ. Բաբույանը, ք.գ.դ., պրոֆ. Գ. Խաչատրյանը, ք.գ.դ., պրոֆ. Թ. Շահվերդյանը, դոցենտներ՝ Ա. Պողոսյանը, Ա. Սանթոյանը, Դ. Գյուղատյանը, Հ. Հարությունյանը, Վ. Փիլոյանը, Ա. Սարուխանյանը, Գ. Հովհաննիսը, Գ. Մալումյանը, Ա. Եղոյանը, Լ. Պետրոսյանը, Տ. Դանիելյանը, Շ. Ղուկասյանը, Ն. Անտոնյանը:

Լեզվաբանական ուսումնասիրություններն ավանդաբար վերլուծության են ենթարկում գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական աշխարհը, քանի որ այստեղ բառերի ուղղակի և փոխաբերական կիրառությունները հիմնականում առնչվում են տվյալ ժողովրդի լեզվամտածողությանը:

Այս առումով հետաքրքրական է վավերագրությունը՝ որպես և՝ գեղարվեստական, և՝ իրապատում ստեղծագործություն, որը, ունենալով իր գրականագիտական ժանրային տարբերությունները, առանձնանում է լեզվական յուրահատկություններով: Վերջիններս, հեղինակի կողմից առանձին-առանձին քննվելով և բացահայտվելով որպես զիտական փորրածավալ աշխատանքներ, ամբողջացել են «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն» ընդարձակ աշխատության մեջ: Հեղինակը, քննելով 19-րդ դարի 60-ականներից մինչև 21-րդ դարի 10-ական թթ. վավերագրությունը, հնարավորություն է ընձեռում նաև նոր սերնդի համար՝ շարունակելու ուսումնասիրել մինչ այդ և դրանից հետո եղած վավերագրությունները, ինչպես նաև գրական մյուս ժանրերի լեզվական առանձնահատկությունները:

Վերոնշյալ նպատակին է միտված նաև պաշտպանության ներկայացված ատենախոսությունը՝ «Արևելահայ գեղարվեստական վավերագրություն» վերտառությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է հինգ գլուխց՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված տեսական գրականության, սկզբնաղյուրների և բնագրերի ցանկերից:

Ատենախոսության ներածական բաժնում հեղինակն անդրադարձել է հայ գեղարվեստական վավերագրության պատմությանը մասնավորապես, վավերագրության ժանրին՝ ընդհանրապես: Այս դեպքում կատարված վերլուծությունները հիմնականում գրականագիտական բովանդակություն ունեն:

Աշխատանքում ատենախոսը քննում է արևելահայ գեղարվեստական վավերագրության ձևավորման և պատմական զարգացման հարցեր՝ քննելով բնագրային նյութերը և դրանց մասին եղած դիտարկումները, որոնց արդյունքում պարզ է դառնում, որ դրանց լեզվական առանձնահատկությունները քննված չեն և կարոտ են ուսումնասիրության:

Հետագա շարադրանքում քննվել են գեղարվեստական վավերագրության բառային միավորները, որի արդյունքում պարզ է դարձել, որ դրանցում ընդհանուրհայերենյան բառերի կողքին գործածվել են զրաբարյան, բարբառային,

*արևմտահայերեն՝ բառեր, ինչպես նաև նորաբանություններ, հնաբանություններ, օտարաբանություններ, դարձվածքներ:*

«Գեղարվեստական վավերագրության քերականական առանձնահատկությունների բնություն» զիսի առաջին ենթամասում ներկայացված են խոսրի մասերը՝ ըստ թերքող և չթերքող ընդհանուր բնութագրիների: Երկրորդ մասում դիտարկված են վավերագրության լեզվի շարահյուսական առանձնահատկությունները:

Աշխատանքն ավարտվում է գեղարվեստական վավերագրության պատկերավորման-արտահայտչական համակարգի բացահայտմամբ, որտեղ հեղինակը ներկայացրել է պատկերավորման և արտահայտչական միջոցները, որոնց կիրառական առանձնահատկություններով էլ վավերագրության լեզուն տարբերվում է գեղարվեստական մյուս ստեղծագործությունների լեզվից:

Ատենախոսությունը եզրափակվում է բննությունից բխող եզրակացություններով, որոնք ամրողացնում են հեղինակի ասելիքը և դառնում ուսումնասիրության տրամաբանական ամփոփումը:

Կարծում ենք, որ ատենախոսը լուծել է իր առջև դրված խնդիրները՝ հրապարակային պաշտպանության ներկայացնելով արդիական հնչողություն և հետաքրքրություն ներկայացնող թեմայի համակողմանի վերլուծություն: Աշխատանքը հասուն է թե՝ արծարծված խնդիրների լուծման ուղիների ընտրության, թե՝ դրանց բննության խորության առումով:

Արժնորենով կատարված աշխատանքը՝ չենք կարող չնշել որոշ թերություններ և վրիպումներ, որոնց վրա ենք ուզում հրավիրել ատենախոսի ուշադրությունը:

1. Ներածության մեջ հեղինակը, ներկայացնելով ուղեգրություն ժանրի ծանրի ծագումնաբանությունը, հաստատում է, որ այն ծագել է դեռևս բանահյուսական շրջանում, սակայն հետազա շարադրանքում դրա գեղարվեստական արձագանքներին չի անդրադառնում:

2. Գեղարվեստավավերագրական երկերի շարահյուսական առանձնահատկություններն ընդհանուր ուսումնասիրության են ենթարկված: Կարծում ենք՝ լեզվական կադապարների շարահյուսական

առանձնահատկությունների հանգամանալից վերլուծությունը կարևոր է, քանի որ լեզվական այս մակարդակում են առանձնանում ոճական հնարները:

3. Աշխատանքում «զրաբարյան» համարված մի շարք ձևեր հինհայերենյան չեն. դրանք կա' մ միջինհայերենյան, կա' մ բարբառային իրողություններ են:

□ Անձնական նորանց, դոցանից (152, 153) դերանվանական ձևերը կազմված են զրաբարյան վերջավորությունների տեղափոխությամբ:

□ *Առակայր* (154), *նվերը* (158) ձևերը մեջբերված նախադասության մեջ կատարում են սեռի խնդրի գործառույթ, ինչը հուշում է, որ *ք* զրաբարյան հոգնակիակերտը ուղղական հոլովի վերջավորություն չէ:

□ *Սենեկ* հնչյունափոխված ձևն ավելի հասուկ է միջին հայերենին (154):

□ ՆՀԲ-ն վկայում է, որ *կյուրակի* ձևը (154) բարբառային տարբերակ է, քանի որ զրավոր հուշագրություններում այն վկայված է *կյիւրակէ* ձևով:

□ *Մահմեդական բառը* (157) հայ հին մատենագրության մեջ գործածվել է միայն մեկ անգամ՝ Նարեկացու երկերում՝ *մահմետական ուղղագրությամբ*:

□ Գրաբարյան *-այ, -ար, -աւ* վերջավորություններով բայաձեւերը բերված օրինակներում հիմնականում գումարվել են *զ* հիմքով կազմություններին, որոնք զրաբարում բացառվում են: Արանց մասին նույնպես անդրադարձ չկա, և այս բայաձեւերը ատենախոսի կողմից համարվել են զուտ զրաբարյան (318):

4. Աշխատանքում տեղ են գտել նաև որոշ լեզվառական, կետադրական և տեխնիկական բնույթի վրիպումներ:

Սեղմագիրը և հրապարակված հոլվածները արտացոլում են ատենախոսության հիմնահարցը:

Ամփոփելով փաստենք, որ Աշոտ Վոլոյյայի Գալստյանի սույն ատենախոսությունն ունի տեսական և գործնական նշանակություն և բավարարում է դոկտորական ատենախոսությանն առաջարկվող պահանջները, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին: Հետևաբար միջնորդում ենք ԳԱԱ Հր. Աճայանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող 019 մասնագիտական խորհրդին՝ «Արևելահայ գեղարվեստական փակերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական - 21-րդ դ. 10-ական թթ.)» թեմայով

դոկտորական ատենախոսության համար Աշոտ Վոլոյյայի Գալստյանին շնորհելու  
Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի  
գիտական աստիճան:

ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի  
պաշտոնակատար՝  բ. գ. թ., դոցենտ Հ. Բարուրյան

Հ. Բարուրյանի բոռքագրությունը վավերացնում եմ՝  
ՎՊՀ-ի գիտքարտուղար՝  մ.գ.թ., դոցենտ Ս. Բեժանյան